

369

2 (075)
U-39

1915

2010

000

0439
35


1916 ՆԷ 144.

(17)

ՀԱՄԱՁԱՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ

ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ



АКАДЕМИИ НАУК
СССР



ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Կ Ա Չ Մ Ե Ց Ի Ն

Յոդի. ա. Բ. Մարտիրոսեան եւ Գիւս. ա. Բ. Ազաւենան.

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

Առաջին տպագրութիւն

Թիֆլիս, Տպարան Ն. Ազաւենանի, Պօլից. 7. 1915

2010

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տ Պ Ո Ւ Ա Շ

ՀՈԳԵԻՈՐ ԺԱՅՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ՀՐԱՄԱՆՈՎ

50499-ախ



36444-62

Չեռնարկելով մեր ծխական-եկեղեցական դպրոցների համար կրօնի դասագրքերի հրատարակութեան, մեր նպատակն է նախ՝ քս ամենայնի մօտ լինել աւետարանին, որ հիմնն է կրօնական ամեն ուսմունքների եւ երկրորդ՝ կրօնական գիտելիքները բոլորովին պարզ եւ դիւրամբունելի դարձնել մանուկների համար:

Առաջին տարուայ ծրագիրը որոշում է տալ մի քանի բարոյագիտական հեփաքներ. այդ հեփաքները պէտք է սաներին պատմեն իրանք կրօնուսույցները, ուստի մենք աւելորդ համարեցինք դնել նոր կարգալ-գրել սովորույ մանուկների դասագրքի մեջ, այլ իւր ժամանակին կը տանք ուսուցչաց ձեռնարկում:

12012

1.
**Յանունն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ. ամէն:**

Հօր, Որդու և սուրբ Հոգու անունով. ամէն:

2.

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ
եղիցի անունն քո. եկեսցէ արքայու-
թիւնն քո. եղիցին կամք քո որպէս
յերկինս և յերկրի. զհաց մեր հանա-
պագորդ՝ տուր մեզ այսօր: Եւ թող
մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թո-
ղումք մերոց պարտապանաց: Եւ մի
տանիր զմեզ 'ի փորձութիւնն. այլ
փրկեա՛ զմեզ 'ի չարէ: Ձի քո է ար-
քայութիւն և զօրութիւն և փառք յա-
ւիտեանս. ամէն:

Մեր Հայր, որ երկնքումս ես. սուրբ լինի
քո անունը. քո թագաւորութիւնը զայ. քո կամ-
քը լինի թէ՛ երկնքում և թէ՛ երկրի վրայ. մեր

15015

ամեն օրուայ հացը տուր մեզ այսօր: Թող մեր պարտքերը, ինչպէս որ մենք էլ թողնում ենք մեր պարտապաններին: Մեզ փորձանքի մէջ մի գցի. այլ փրկիր չարից: Որովհետև ամեն ժամանակ քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը. ամէն:

○○○○○

3. ՄԱՐԻԱՄ ԿՈՅՄԻ ԿՈՅՄԻ ԺՆՈՒՆԴԸ

Այն երկիրը, ուր ապրում են հրէաները, կոչւում է Հրէաստան:

Հրէաստանի Նազարէթ քաղաքում ապրում էին մէկ մարդ ու կին—Յովակիմը և Աննան:

Նրանք որդի չունէին և տխուր էին:

Աստուած նրանց ուրախացնելու համար պարզեց մի աղջիկ, որի անունը դրին Մարիամ:

Երբ Մարիամը երեք տարեկան դառաւ՝ ծնողները, ինչպէս վաղօրօք խոստացել էին, տարան նրան տաճարը և խոստացան, որ կը ծառայէ Տիրոջ:

Մարիամը մնաց տաճարում, և երբ



մեծացաւ՝ կարգում էր սուրբերի պատ-

մութիւններ, աղօթում էր և ծառայում տաճարին:

Երբ Մարիամը տասնըջորս տարեկան դառաւ, քահանաները նրան յանձնեցին իր ազգական հիւսն Յովսէփին, որի մօտ և ապրում էր նա:

Մարիամ սուրբ կոյսի ծնունդը հայերս տօնում ենք ամեն տարի սեպտեմբերի 8-ին. իսկ տաճարին ընծայելու տօնը կատարում ենք նոյեմբերի 21-ին:

◦◦◦◦◦

4. Ա Ի Ե Տ Ո Ի Մ

Մի անգամ Աստծու Գաբրիէլ հրեշտակը երևաց Մարիամին և ասաց.

«Ուրախացի՛ր, շնորհալի, Տէրը քեզ հետ է»:

Մարիամն այս խօսքերը որ լսեց՝ շփոթուեց և միտք էր անում, թէ ի՞նչ բանի համար պէտք է լինի այս ուրախութիւնը:

Հրեշտակն ասաց նրան. «Մի վա-

խենար, Մարիամ, Աստուած քեզ սիրեց, դու մի որդի կունենաս, որի ա-



նունը Յիսուս կը դնես. նա մեծ կը-

լինի և Աստծու որդի կրկոշուի»:

Այս խօսքերով հրեշտակն ուզում էր հասկացնել, որ Յիսուս պէտք է սովորցնէ մարդկանց բարի գործեր կատարել և այդպիսով հեռացնել նրանց չար գործերից. նա պէտք է դառնար մարդկանց ազատողը—Փրկիչը:

Մարիամը հնազանդուեց Աստծու կամքին. նա ասաց. «Ես Տիրոջ աղախինն եմ, թող այնպէս լինի, ինչպէս որ ասիր»:

Եւ հրեշտակը հեռացաւ նրանից:

Հրեշտակը Մարիամին աւետեց ապրիլի 7-ին. սրա համար էլ մենք աւետումը տօնում ենք ամեն տարի այդ օրը:

◦◦◦◦◦

5. ՅԻՍՈՒՍԻ ԺՆՈՒՆՅՈՒՆ

I. Մօտեցաւ Յիսուսի ծնունդու ժամանակը:

Այդ ժամանակ հրաման դուրս



եկաւ, որ բոլոր ժողովրդին ցուցա-

կազրեն, որ իմանան թէ ինչքան ժողովուրդ կայ. սրա համար ամեն մարդ պէտք է գնար իր ծնած տեղը:

Որովհետև Յովսէփը Բեդղեհէմ էր ծնուել, այդ պատճառով Յովսէփն ու Մարիամն էլ գնացին Բեդղեհէմ քաղաքը:

Բեդղեհէմը գտնուում է Հրէաստանում, ուր աւելի տաք է, քան մեր երկիրը: Բեդղեհէմը փոքր քաղաք էր և մեծ բազմութիւն էր հաւաքուել այնտեղ իրանց անունները գրել տալու համար: Նրանք բռնել էին քաղաքի բոլոր բնակարանները:

Յովսէփն ու Մարիամը տուն չը գտան իրանց համար, ուստի ստիպուած մտան մի այր (տնակ), ուր հովիւները վատ եղանակներին պահում էին իրանց ոչխարները:

Մարիամի ազատուելու ժամանակը հասաւ և այդ գիշեր ծնաւ մի մա-

նուկ—տղայ, որին բարուրով փաթըթեցին և դրին մսուրի մէջ:

Այդ մանուկն էր հրեշտակի խոստացած Յիսուս-Փրկիչը:


II. Բեդղեհէմը տաք երկիր է, ուստի և այնտեղ ոչխարը գիշերն էլ դուրսն են պահում — դաշտում: Յիսուսի ծնուելու գիշերն էլ հովիւները իրանց ոչխարներով դաշտումն էին. նրանց յայտնի չէր Փրկչի ծնուելու լուրը:

Տիրոջ հրեշտակը երևաց հովիւներին և լոյս ծագեց նրանց վրայ:

Հովիւներն այդ բանի վրայ շատ վախեցան:

Հրեշտակն ասաց նրանց. «մի վախէք, ես ձեզ մեծ աւետիս եմ բերել. այդ ուրախութիւնը ամենքի համար է. այսօր ձեզ համար Փրկիչ ծնուեց Բեդղեհէմում—նա մեր Տէր

Յիսուսն է. երեխային կը գտնէք այս



նշանով. փաթրթած է բարուրում և
դրած մսուրի մէջ»:

Այս որ ասաց՝ յանկարծ նրա մօտ
երևացին ուրիշ շատ հրեշտակներ, ու-
րոնք օրհնում էին Աստծուն և ա-
սում. «Փառք Աստծուն երկնքում,
աշխարհին խաղաղութիւն, մարդկանց
մէջ սէր և գթութիւն»:

III. Հէնց որ հրեշտակները հեռա-
ցան՝ հովիւներն ասացին մէկմէկու.
«եկէք գնանք Բեզղեհէմ և տեսնենք,
թէ այս ի՞նչ բան է, որ Տէրը ցոյց
տուեց մեզ»:

Նրանք շտապով գնացին պտրտե-
լու մանկան. և գտան Մարիամին ու
Յովսէփին և մանուկին մսուրի մէջ
դրած: Հովիւները պատմեցին այն
բոլորը, ինչ որ լսել էին հրեշտակից
մանուկի մասին. և ամենքը զարմա-
նում էին հովիւների պատմածների
վրայ:

Հովիւները յետ դարձան իրանց

տեղերը, փառք էին տալիս Աստծուն
և ամենքին պատմում իրանց տեսածն
ու լսածը:

Յիսուսի ծնունդը կատարում ենք ամեն
տարի յունուարի 6-ին:

Ծննդի շարական

Պորհուրդ մեծ և սքանչելի
Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւք երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:

Այսօր մեծ և հիանալի խորհուրդ իմացուեց.
հովիւները երգում են հրեշտակների հետ,
աշխարհին աւետիս են տալիս:

Ծնաւ նոր արքայ
'ի Բեղղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան, օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ:
Նոր թագաւոր ծնուեց Բեղղեհէմ քաղա-

քում. մարդիկ, օրհնեցէք, որովհետև նա մեզ
համար ծնուեց:



6. ՅԻՍՈՒՍԻՆ ՏԱՃԱՐ ՏԱՆԵԼԸ—ՏԵՆՈՒՆ- ԸՆԴՆՈՒՆՋ

Հրէաների մէջ սովորութիւն կար,
որ քառասուն օրական նորածին տը-
ղային տանում էին տաճար, նուի-
րում էին Աստծուն և զոհ էին անում:
Հարուստները զոհում էին գառը, իսկ
աղքատները մի շուխտ աղաւնի:

36444-66

Յիսուսին էլ, երբ քառասուն օ-
րական դառաւ, ծնողները տարան Ե-
րուսաղէմի տաճարը. և որովհետև աղ-
քատ էին, իրանց հետ տարան մի
շուխտ աղաւնի:

Այնտեղ կար մի արդար ծեր մարդ՝
Սիմէօն անունով: Նա Աստծու հոգով
իմացել էր որ չպէտք է մեռնի, մին-
չև որ խոստացած Փրկչին չը տեսնի:
Այդ ծերունին արդէն գիտէր, որ այդ



ժամանակ Փրկիչը պէտք է տաճար գալ:



Երբ ծնողները մանուկ Յիսուսին



տարան՝ Երուսաղէմ, Սիմէօնը գրկեց
 նրան, փառք տուեց Աստծուն և ա-
 սաց. «Տէր, այժմ թող ես մեռնեմ,
 որովհետև իմ աչքով տեսայ բոլոր
 ժողովրդի Փրկչին»:
 Ծնողները մնացել էին զարմացած
 այս խօսքերի վրայ:
 Այնտեղ մէկ գուշակող կին կար՝
 Աննա անունով: Այդ պառաւ կինը
 ծառայում էր տաճարին և իր կեան-
 քը անց էր կացնում աղօթքով:
 Նա էլ սկսեց փառք տալ Տիրոջ
 և ամենքին պատմել, որ զա Աստծուց
 խոստացուած Փրկիչն է:

Այս տօնը կոչւում է Տեառնընդառաջ և
կատարւում է ամեն տարի փետրուարի 14-ին:

•••••

7. ՅԻՍՈՒՍԻ ՄԿԻՏՈՒԹԻՒՆԸ.

1. Հրէաստանի մէջ մի խելօք
մարդ կար, անունը Յովհաննէս:


Նա քաշուեց անապատ և այնտեղ էր ապրում: Անապատը այնպիսի տեղ է, ուր ոչ ծառ է բսնում, ոչ էլ մարդիկ են ապրում: Այդ անապատով անցնում էր Յորդանան գետը:

Յովհաննէսի վերարկուն ուղտի բրդից էր, մէջքին կապած ունէր կաշուէ գօտի. նրա կերակուրն էր մարախ և վայրի մեղր:

Յովհաննէսն զգում էր, որ մարդկանց մէջ շարութիւնը շատացել է. այդ պատճառով նա անապատում խրատում էր ժողովրդին, որոնք ամեն կողմից գալիս էին նրա մօտ և խոստովանում էին իրանց գործած շարութիւնները:

Այն բոլոր մարդկանց, ովքեր Յովհաննէսին խոստանում էին անկարգ գործեր շանել, ոչ ոքին չգրկել, աղքատներին ողորմել, նա մկրտում էր Յորդանանի ջրի մէջ:

2. Այդ ժամանակ Յիսուսն ար-



դէն երեսուն տարեկան էր:

Նա լսել էր որ Յովհաննէսը խրատում է ժողովրդին և մկրտում նրանց: Յիսուսն էլ Նազարէթից գնաց Յորդանան, որ ինքն էլ մկրտուի Յովհաննէսից. բայց Յովհաննէսը չէր ուզում նրան մկրտել, որովհետև գիտէր որ Յիսուս սխալմունքներ և մեղքեր չունէր, ուստի և կարիք չունէր սրբութելու: Իսկ Յիսուս պատասխանեց նրան. թող այդ խօսքերը, մկրտիր ինձ, արդարութիւնը պահանջում է, որ ես էլ ուրիշների պէս կատարեմք խրատները:

Յովհաննէսը հնազանդուեց Յիսուսին և մկրտեց նրան Յորդանան գետի մէջ:

Երբ Յիսուս ջրից դուրս եկաւ և ազօթում էր՝ Յովհաննէսը տեսաւ, որ Աստծու Հոգին աղաւնու նման իջնում էր Յիսուսի վրայ և լսեց Հօր Աստծու ձայնը, որ ասում էր. «Իս

է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի»:

Յիսուսի մկրտութեան տօնը մենք կատարում ենք ամեն տարի յունուարի 6-ին:

Մկրտութեան տօնը կոչւում է նաև Չորինէք, որովհետև այդ օրը հոգևորականներն ու ժողովուրդը գնում են գետը և խաչը ջուրն են պցում:

«○○○○»

Տ. ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ

Մի անգամ Յիսուս գնաց Բեթանիա գիւղը, որ մօտ էր Երուսաղէմին: Բեթանիա գիւղում ապրում էր Մարթա անունով մի կին:

Մարթան մի քոյր էլ ունէր, որի անունն էր Մարիամ:

Մարթան ու Մարիամը Ղազարոսի քոյրերն էին և Յիսուսին բարեկամ:

Յիսուսը սիրում էր թէ Ղազարոսին և թէ նրա երկու քոյրերին:

Երբ Յիսուս մտաւ Բեթանիա, նրան իր տանը հիւրասիրեց Մարթան:



Այդ ժամանակ Մարիամը նստեց Յի-

սուսի մօտ և լսում էր նրա խրատները, իսկ Մարթան գնաց ճաշի պատրաստութիւն տեսնելու Յիսուսին պատուելու համար:

Մարթան եկաւ Յիսուսի մօտ և ասաց. բոյրս ինձ մենակ է թողել ճաշ պատրաստելու, խնդրեմ ասես որ գայ ինձ օգնի:

Յիսուս պաասխանեց և ասաց. «Մարթա, դու աշխատում ես շատ տեսակ կերակուրներ պատրաստել, իսկ ինձ քիչն էլ բաւական է. Մարիամը աւելի լաւ բան ընտրեց իր համար:

Այս խօսքով Յիսուս ուզում էր ասել, որ Մարթան ուտելու մասին էր հոգս քաշում, իսկ Մարիամը ականջ էր դնում Յիսուսի լաւ լաւ խրատներին, որ ուտելուց աւելի լաւ բան է:

Սրանով Յիսուս սովորցնում է մեզ, որ լաւ խրատներ լսելն ու կատարելը աւելի լաւ է, քան տեսակ տեսակ կերակուրներ ուտելը:

9. ՈՏՆԱԼՈՒՄ

1. Հրէաները սովորութիւն ունէին ամեն տարի կատարել իրանց գերութիւնից ազատուելու տօնը: Այդ տօնը կոչուում էր Չատիկ: Չատիկ տօնին նրանք ուտում էին քաղարջ հաց և գառը:

Յիսուս ցանկացաւ, որ գատկական տօնը միասին կատարէ իր աշակերտների հետ. նա քաղարջ ուղարկեց իր աշակերտներից երկուսին, որ Երուսաղէմի վերնատանը ընթրիք պատրաստեն:

Երբ որ ընթրիքը պատրաստ էր, Յիսուս իր տասներկու աշակերտներով գնաց վերնատուն և միասին սեղան նստեցին:

Յետոյ վերկացաւ սեղանից, վրայի շորը հանեց, առջևը գոգնոց կապեց, կոնքի (տաշտ) մէջ ջուր ածեց, սկսեց աշակերտների ոտները լուա-

նալ և դենջակով (սրբիչ, թաշկինակ) սրբել: Երբ արդէ մի ոտնով լվաւ, ոտն

Երբ նրանց ոտները լուաց, Յիսուս հագաւ իր շորերը, դարձեալ նստեց սեղան և ասաց իր աշակերտներին. «Գիտէ՞ք ես ինչ արի. դուք ինձ կանչում էք ուսուցիչ և Տէր և ուղիղ էք ասում: Ես նրա համար ձեր ոտները լուացի, որ դուք էլ մէկմէկու ոտը լուանաք. ինչպէս որ ես ձեզ սիրեցի և խոնարհութեան օրինակ տուի, այնպէս էլ դուք պէտք է խոնարհ լինիք ամենքի մօտ և միմեանց սիրէք:

2. Ընթրիքի ժամանակ Յիսուս տխրեց. նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մէկը պէտք է ինձ մատնէ»:

Աշակերտները տարակուսած նայեցին մէկմէկու և հարցնում էին.

«միթէ ես եմ այդ մարդը, Տէր»:

Յուդան էլ միևնոյն հարցը տուեց Յիսուսին:

Յիսուս պատասխան տուեց նրան. «Ինքդ ես ասում, որ դու ես»: Եւ հացի կտորը տուեց Յուդային ու ասաց. «Գնան, ինչ որ անելու ես, շնուտ արա»:

Հէնց որ հացի կտորը ստացաւ՝ Յուդան դուրս գնաց այնտեղից: Արդէն գիշեր էր: Նա գնաց Յիսուսի թշնամիների մօտ, որոնք ուզում էին սպանել Յիսուսին իր ճշմարտախօսութեան համար:

Ոտնալուայի տօնը կատարում ենք ամեն տարի աւագ հինգշաբթի երեկոյեան. այդ ժամանակ եկեղեցում մեծ քահանան լուանում է միւսների ոտները. իսկ ժողովրդին բաժանում են կարագ:

○○○○○

Ոսնալուային երգում են այս բարականը

Այսօր կանգնեցաւ աւագան մկրտութեան

'ի թողութիւն մեղաց մերոց:

Այսօր սահմանուեց մկրտուելու աւագանը,
Մեր մեղքերի թողութեան համար:

Այսօր Տէրն մեր լուանայր զոտս
աշակերտաց

Եւ պատուիրէր զայս ասելով.

Այսօր մեր Տէր Յիսուսը լուանում էր իր
աշակերտների ոտները և ասում էր նրանց.

Մի ոմն 'ի ձէնջ, եղբարք, մատնելոց է զիս 'ի մահ, և որոշի յաշակերտացդ:

Ձեզնից մէկը, եղբայրներ, պէտք է ինձ
մատնէ և հեռանում է աշակերտներիցդ:

○○○○○

10. ԽՈՐՀՐԿԱՒՈՐ ԸՆԹՐԻՔ.

Ստնալուռայից յետոյ ընթրիքի ժամանակ Յիսուս շատ խրատներ տուեց իր աշակերտներին:

Նա ասաց. «Իուրք ամենքդ այնպէս խոնարհ պէտք է լինէք, որ ով ձեզանից մեծ է՝ պէտք է ամենից փոքրը համարէ իրան, ինչպէս որ ես եմ ձեր մէջ ինչպէս սպասաւոր»:

«Ձեզ պատուիրում եմ, որ մէկմէկու այնպէս սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի: Եթէ դուք միմեանց սիրէք, ամենքը կ'իմանան, որ դուք իմ աշակերտներն էք»:

Եւ ինչպէս իր սէրի նշան՝ Յիսուս վերցրեց հացը, օրհնեց, կտրեց, տուեց իր աշակերտներին և ասաց. «Վերցրէք և կերէք, այս իմ մարմինն է»: Ընթրիքից յետոյ էլ վերցրեց գինին, օրհնեց, տուեց նրանց ու ասաց.

«Ամենքդ ամենքդ այս գինին, սա



իմ արիւնն է»: Վերջն էլ աւելցրեց.

«այս բանը կատարեցէք ինձ յիշելու համար»:

Մենք էլ միշտ կատարում ենք նրա յիշատակը ճիշտ այնպէս, ինչպէս ինքը Յիսուս օրինակով ցոյց տուեց վերնատանը: Տօներին և երբ որ ժողովուրդն ուզում է՝ քահանան պատարագ է անում և հաղորդում ժողովրդին:

Ով որ ցանկանում է հաղորդուել, նախ և առաջ մաքրում է իր խիղճը, իր կատարած սխալմունքներն ու մեղքերը յայտնելով քահանային և նրանից ներում ստանալով:

.....

11. ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻՋՈՒՄ

Խորհրդաւոր ընթրիքից յետոյ Յիսուս էլի շատ խրատներ տուեց իր աշակերտներին և յետոյ նրանց հետ միասին բարձրացաւ Չիթենեաց սարը:

Այնտեղից Յիսուս իր աշակերտներով գնաց Գեթսեմանի գիւղի պարտէզը և ասաց նրանց. «նստեցէք այստեղ, մինչև որ ես գնամ աղօթեմ»:

Դուք էլ աղօթք արէք, որ փորձանքի մէջ չընկնէք»:

Վերցրեց իր հետ աշակերտներից երեքին, մի փոքր առաջ գնաց և ասաց նրանց. «դուք էլ այստեղ կացէք, աղօթք արէ՛ք և չըքնէք»:

Իսկ ինքը մի քիչ էլ առաջ գնաց և սկսաւ աղօթք անել Հօր Աստծուն այսպէս. «Հայր, դու ամեն բան կարող ես անել. եթէ կամենաս՝ հեռացրու ինձանից այս շարշարանքը. բայց ոչ թէ իմ ուզածը լինի, այլ քոնը»:

Յիսուս դարձաւ իր աշակերտների մօտ, տեսաւ որ քնել են՝ ասաց նրանց. «արթո՛ւն կացէք և աղօթք արէք, որ փորձանք չպատահի ձեզ»: Եւ նորից գնաց աղօթելու:

Երեք անգամ աղօթեց և երեք անգամ դարձաւ աշակերտների մօտ և ամեն անգամ քնած գտաւ նրանց: Վերջը ասաց. «այժմ կարող էք քնել»

և հանգստանալ, որովհետև հասաւ



ժամը, երբ ինձ պիտի մատնեն մե-

ղաւոր մարդկանց ձեռքը: Եկէք գը-
նանք, որովհետև անձ մօտենում է
մատնիչը»:

12. ՅԻՍՈՒՍԻ ԹՃՆԱՄԻՆԵՐԸ

Յիսուս իր քարոզներով յայտնում
էր մարդկանց, թէ մեր երկնաւոր
Հայրը սուրբ է, զթած է և բարի. և
մենք էլ նրա պէս պէտք է լինենք
բարի, արդար և զթած գէպի մեր
ընկերները:

Յիսուս ինքն էլ բարի էր. սիրում
էր մանուկներին և մեծերին: Խղճում
էր և բարիք էր անում ամեն նեղա-
ցածներին:

Յիսուսի այսպիսի բարերարու-
թիւնները տեսնելով՝ օրէցօր շատա-
նում էր նրան հաւատացողների և
նրա խրատները պահողների թիւը:

Բարի մարդիկ միշտ ունենում են
չար թշնամիներ: Բարի Յիսուսն էլ

ուռնեցաւ շատ թշնամիներ. դրանք էին՝ հրէայ կարգացողները, քահանաները և սրանց հետևողները, որոնք դրսից երևում էին անմեղ, իսկ գործքով կեղծաւոր էին, ազահ ու խաբեբայ: Սրանց պակասութիւնները Յիսուս միշտ երեսով էր տալի: Սրանք էլ չէին սիրում Յիսուսին և ուզում էին սպանել նրան:

Նրանք փող տուին իր աշակերտ Յուդային, որ սա Յիսուսին մատնէ իրանց: Յուդան էլ մոռանալով իր մեծ ուսուցչի արած բարիքները՝ խոստացաւ կատարել նրանց ցանկութիւնը:

13. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Երբ Յիսուս աղօթքը վերջացրեց Գեթսեմանի պարտիզում, Յուդան շատ զինուորներով մտաւ պարտէզ սրերով և վառած ջահերով:

Յուդան նշան էր տուել, թէ՛ ում

որ ես համբուրեմ, նա է Յիսուսը, նրան բռնեցէք: Նա մօտեցաւ Յիսուսին և ասաց. «ճղ կաց, ուսուցիչ» և համբուրեց նրան:

Յիսուս պատասխանեց նրան. «Յուդա, ինչի՞ համար ես եկել, համբուրելով ես մատնում ինձ»:

Հրէից զինուորներն ու ծառաները բռնեցին Յիսուսին և կապեցին:

Այդ ժամանակ բոլոր աշակերտները թողին ու փախան:

○○○○○


14. ՅԻՍՈՒՍԻ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Յիսուսի թշնամիները որոշեցին նրան սպանել՝ խաչի վրայ:

Ուրբաթ առաւօտը վաղ Յիսուսին կապած տարան Պիղատոս դատաւորի մօտ և յայտնեցին իրանց վճիռը:

Պիղատոսը քննեց նրանց գանգատները և տեսաւ, որ Յիսուս բոլորովին արդար է. նա տեսաւ որ

հրէաները նրա համար են ատում
Յիսուսին, որ սա միշտ նրանց երե-



սովն է տալիս իրանց սխալները: Բայց

թշնամիները այնքան չարախօսեցին
Յիսուսի մասին, որ Պիղատոսը
ստիպուած՝ վերցրեց ջուր, ձեռները
լուաց ժողովրդի առաջ և ասաց.

«Ահա դուրս եմ բերում Յիսու-
սին և յայտնում եմ ձեզ, որ ես սրա
մէջ ոչ մի յանցանք չեմ գտնում.
տարէք, սրա մեղքը ձեր վզին լինի»:

Ժողովուրդը աղաղակեց և ասաց.
«Իրա արիւնը թո՛ղ լինի մեզ վրայ և
մեր որդոց վրայ»:

Իրանից յետոյ Պիղատոսը իրա-
ւունք տուեց նրանց որ տանեն ու
խաչեն:

•••••

15. ՅԻՍՈՒՍԻ ԽՆՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Նոյն օրը գինուորները տարան
Յիսուսին Գողգոթա սարը՝ խաչելու:
Յիսուս ինքն էր շալակած տանում
խաչափայտը: Նրա ետևից գնում էր
մեծ բազմութիւն:

Խաչը ծանր էր և Յիսուս չէր կա-



րողանում տանել, դրա համար էլ մի

գիւղացի վարձեցին և նրա շաւակը տուին:

Երբ հասան Գողգոթա, Յիսուսին բարձրացրին և ձեռներն ու ոտները մեխեցին խաչի փայտի վրայ: Այդպիսով նրան խաչեցին:

Յիսուս խաչի վրայից աղօթում էր խաչող ժողովրդի համար և ասում. «Հայր, ներիր գրանց, որովհետև չեն հասկանում, թէ ինչ են անում»:

Յիսուսի աջ և ձախ կողմերում խաչեցին երկու աւագակներ:

Պիղատոսը մի քանի լեզուով մի տախտակի վրայ գրեց այս խօսքերը. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից» և կպցրեց խաչի գլխին, որ բոլոր ժողովուրդն իմանայ, թէ ինչ յանցանքի համար էին պատժում նրան:

16. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԸ

Յիսուսի աշակերտները հրէաների ահից փախել էին. խաչի մօտ մնացել էին մենակ Յովհաննէս աշակերտը, Յիսուսի մայր Մարիամը և մի քանի ազգական կանայք: Երբ Յիսուս տեսաւ նրանց՝ խղճաց իր զժբաղտ մօրը և խաչի վրայից յանձնեց Յովհաննէսին՝ որ նրան պահէ:

Այդ ժամանակ խաւար պատեց աշխարհին. արևը խաւարեց:

Յիսուս աղաղակեց ու ասաց. «Հայր, քեզ եմ յանձնում իմ հոգին» և գլուխը կախելով՝ աւանդեց հոգին:

Ովքեր արևի խաւարումը տեսան՝ վախեցան և ասում էին. «Ճշմարիտ որ այս մարդը Աստծու որդի էր»:

Յիսուսի մահը պատահեց ուրբաթ երեկոյին:

17. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Ուրբաթ երեկոյեան Պիղատոսը իրաւունք տուեց, որ Յիսուսի մարմինը թաղեն:

Երկու հարուստ և քարի մարդիկ, Յովսէփ Արեմաթացին և Նիկողիմոսը, որոնք հաւատում էին, որ Յիսուս Աստծու որդի է, խնդրեցին Պիղատոսից, որ իրաւունք տայ Յիսուսի մարմինը թաղեն, ցած բերին նրան խաչից, պատանեցին մաքուր կտաւով և ինչպէս յարգանքի նշան՝ օձեցին անուշահոտ խնկով և իւղերով:

Յիսուսի խաչուած տեղի մօտ մի պարտէզ կար, պարտիզում մի նոր գերեզման քարի մէջ փորուած. այդ գերեզմանի մէջ դրին Յիսուսի մարմինը, մի մեծ քար էլ գլորեցին գերեզմանի դրանն ու գնացին:

Յիսուս իր մահից առաջ ասել էր, թէ պէտք է մեռնի և երեք օրից յե-

տոյ կենդանանայ: Հրէաները վախեցան որ Յիսուսի աշակերտները կը գողանան իրանց ուսուցչի մարմինը և կասեն թէ կենդանացաւ. դրա համար մեծ քահանաները կնքեցին գերեզմանի դուռը և զինուորներ նշանակեցին, որ պահպանեն:

○○○○○○○


18. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Հրէաների մէջ սովորութիւն կար, որ ով մէկին սիրում էր, նրա մահից յետ օծում էր նրա մարմինը:

Մարիամ Մագդաղինացին և ուրիշ կանայք, ուզենալով իրանց յարգանքը ցոյց տալ գէպի Յիսուս, շաբաթ երեկոյին պատրաստեցին անուշահոտ խոնկ և կիրակի լուսադէմին գնացին գերեզմանը Յիսուսի մարմինը օծելու:

Նրանց յայտնի չէր, որ Յիսուսի

գերեզմանը կնքել են և վրէն էլ պահպան զինուորներ նշանակել:



Գնալիս մտածում էին, թէ ով պէտք

է գերեզմանի դրան քարը գլորէ, որովհետեւ խիստ մեծ քար էր:

Բայց կանայք զեռ գերեզմանին չհասած, Տիրոջ հրեշտակը գերեզմանի բերանի քարը յետ գլորեց և նըստաւ նրա վրայ:

Փրկիչը յարութիւն առաւ գերեզմանից:

Պահապանները վախեցան և կիսամեռ թափուեցան գետնին:

○○○○○

19. ԻՒՂԱՅԵՐ ԿԱՆԱՅՔ

Այդ միջոցին իւղաբեր կանայք մօտեցան գերեզմանին և տեսան քարը յետ գլորած: Մարիամ Մագդաղինացին շտապեց Յիսուսի աշակերտներին իմաց տալու, որ Տիրոջը գերեզմանից հանել են:

Միւս կանայք մտան գերեզման և տեսան մէկ սպիտակ շորերով երիտասարդ նստած աջ կողմը. նրանք

վախեցան: Երիտասարդն ասաց նրանց. «գիտեմ, խաչուած Յիսուսին էք ուզում, մի վախենաք, նա կենդանի է. անստեսէք նրա տեղը. գնացէք, նրա աշակերտներին ասէք, որ Յիսուսին կտեսնեն Գալիլիայում»:

Կանայք յիշեցին Յիսուսի խօսքերը՝ թէ պէտք է խաչուի և երրորդ օրը կենդանանայ և շտապեցին ուրախացնելու աշակերտներին:

Քրիստոսի յարութիւնը կոչուում է նաև Զատիկ. այդ տօնը կատարում ենք ամեն տարի մարտ կամ ապրիլ ամիսներին:

Յարութեան երգ.

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց.
մահուամբ զմահ կոխեաց.
և յարութեամբ իւրով մեզ զկեանս
պարգևեաց:

Նմա փառք յաւիտեանս. ամէն:

Քրիստոսը յարութիւն առաւ. իր մահով
մահին յաղթեց. և իր յարութիւնով մեզ կեանք
տուեց:

Նրան փառք ամեն ժամանակ. ամէն:

20. ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԸ.

Յիսուս իր յարութիւնից յետոյ
քառասուն օր մնաց երկրիս վրայ:

Այդ քառասուն օրում շատ ան-
գամ երևաց իր աշակերտներին. և
շատ խրատներ տուեց նրանց: Մի
անգամ երևաց նրանց ուսաց. «ինչ-
պէս ուղարկեց ինձ իմ Հայրը, ես էլ
ձեզ եմ ուղարկում: Գնացէ՛ք, սովոր-
ցրէ՛ք բոլոր անհաւատներին, մկրտե-
ցէ՛ք նրանց Հօր, Որդու և սուրբ Հո-
գու անունով»:

Քառասուն օրից յետոյ Յիսուս իր
աշակերտներին տարաւ Չիթենեաց
սարը և ասաց. «սպասեցէ՛ք Երուսա-
ղէմում, մինչև որ մխիթարութիւն

ստանաք երկնքից: Երբ որ Աստու
հոգին կիջնի ձեր մէջ, դուք կգորա-



նաք, այն ժամանակ աշխարհի ամեն



կողմ կքարոզէք իմ մասին և կըսովոր-
ցնէք մարդկանց, ինչ որ սովորել էք
ինձանից»:

Յետոյ ձեռները դէպի երկինք
տարածելով՝ օրհնեց նրանց: Օրհնելու
ժամանակ հեռացաւ նրանցից և բարձ-
րանում էր դէպի երկինք. ամպը
ծածկեց նրան աշակերտների աչքից:

Աշակերտները Ձիթենեաց սարից
դարձան Երուսաղէմ, բարձրացան վեր-
նատուն, ուր Յիսուսի մօր և նրա ու-
րիշ ազգականների հետ անց էին կաց-
նում աղօթքով և սպասում Աստծու
մխիթարութեան:

Համբարձման տօնը կատարում ենք ամեն
տարի Չատկից քառասուն օր յետոյ, հինգշաբ-
թի օրը:



30714

9PM
6/35

304

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Յովհ. ա. ֆ. Մարտիրոսեանի եւ Գիւս ա. ֆ. Աղանեանի

1. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԴԱՍԱԳԻՐՔ, պատկերազարդ. պետական և քաղաքային դպրոցների համար.

գինն է 25 կոպեկ, գումարով գնողին 25% զեղջ


2. ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ, Առաջին տարի, պատկերազարդ. ծխական, քաղաքային և պետական դպրոցների համար.

գինն է 20 կ. գումարով՝ 25% զեղջ.

•••••

ՇԵՏՉՇԵՏԷ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

«Կրօնի դասեր»-ի երկրորդ եւ երրորդ արժիւները.



Դիմել՝ հեղինակներին և քուլտր գրավաճառներին.

2(073)
Մ-39

369

0026521

369

2012

2013

<< Ազգային գրադարան >>



NL0026521

